խախուտ լինելը մարդ որքան խորն է գիտակցում, այնքան աւելի սիրով է փարում ներկային:

⁂

Մինչդեռ վերնաիւտում (տախտակամածի ետեւի մասում) առեւտուրն էր տիրել, սպարդէկի (միջի մասի) վրա եռում էր աշխատանքը: Այստեղ ածուխ են բեռնում, միւս կողմից ջուր են քաշում շոգենաւ:

Ածուխի նաւը կանգնած է մեր շոգենաւին կից, ու մի երկու տասնեակ ճապոնացի յարդէ գլխարկները գլխներին կանգնած են խիստ շարքով նեղ տախտակի վրա՝ ածխանաւի գոգից սկսած մինչեւ շոգենաւի տախտակամածը: Նրանք անց են կացնում ձեռքէ ձեռք ածուխի զամբիւղները, որոնք կարծես սլանում են օդի մէջ, եւ գործը առաջ է սլանում մի զարմանալի աշխոյժով:

Ջուրը քաշում են մի փոքրիկ նաւակից, ուր բանում էին մարդ ու կին, ամեն մէկը իր ջրմուղի գլխին: Կինը մարդուց պակաս չէր աշխատում, մերթ ընդ մերթ նայում էր դէպի մեզ մի լայն ժպիտով, որի միջից, աւա՜ղ, երեւում էին մրուրի նման սեւ ատամները, իբրեւ ամուսնական հաւատարմութեան գերագոյն նշան: Դա մի սովորութիւն է Ճապոնում, որ կինը ցոյց տալու համար, որ բացի իր մարդուց ոչ ոքի դուր գալու ցանկութիւն չունի, սեւացնում է իր ատամները:

Հասաւ ժամանակը ափը ելնելու:

Իմ ուղեկիցներին ճանկել էր արդէն մի ճապոնացի, որ խոստանում էր մեզ առաջնորդել ռուսական խոհանոց ունեցող մի հիւրանոց:

Սանդուխի տակ նաւակների մի այնպիսի խիստ